

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ «ՍՓՅՈՒՌՔ»
 ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
 (2017-2018 թթ. ըստ եռամսյակների)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ							
Միջոցառումներ	Պատասխանատու	2017		2018			
		III	IV	I	II	III	IV
1. Սփյուռքի ներուժի թիրախային օգտագործում (ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետ)							
1.1. 2017-2022 թվ. ընթացքում ապահովել Հայաստանի և սփյուռքի միջև համակողմանի կապերի սերտացման և համագործակցության մակարդակի բարձրացումը, համահայկական առաջնահերթությունների հստակեցումը, համահայկական կառույցների, մասնագիտական ընկերակցությունների և սփյուռքի անհատների հետ համատեղ ծրագրերի (այդ թվում՝ տարածաշրջանային) իրականացումը (ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետի 1-ին ենթակետ)	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալներ Ս.Սրապիոնյան, Վ. Մելիքյան</p> <p>ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյան</p>	<p>1. Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի կազմակերպում</p> <p>2. ՀՄԸՄ 10-րդ մարզախաղերի կազմակերպում</p> <p>3. «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի հետ հայ երիտասարդ արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսի համատեղ կազմակերպում</p> <p>4. Սուրբ Ղազարի հիմնա-</p>	<p>1. Սփյուռքի հայ ճարտարապետների և ընկերակցությունների տվյալների շտեմարանի համալրում</p> <p>2. Հայ բժիշկների մասնագիտական ցանցի ընդլայնման օժանդակություն</p> <p>3. «Հայկական Սփյուռք 2016» տարեգրքի հրատարակում</p>	<p>1. Սփյուռքի ավանդական կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ), նրանց կից կառույցների և հոգևոր կառույցների հետ համատեղ հորեյանական ձեռնարկների, գիտաժողովների, ցուցահանդեսների և մշակութային այլ միջոցառումների կազմակերպում</p> <p>2. Մայրենի լեզվին նվիրված կլոր-սեղան քննարկումների. տոնակատարությունների կազմակերպում</p>	<p>1. «Պատմությունը ճարտարապետության և երաժշտության մեջ» նախագծին աջակցություն</p> <p>2. Հայ ճարտարապետների տվյալների շտեմարանի համալրում</p> <p>3. Տարածքներում ճարտարապետների, բժիշկների, իրավաբանների, ուսուցիչների, ընկերակցությունների ընդլայնում, ստեղծում</p>	<p>1. Ճարտարապետների 4-րդ համահայկական համաժողովի կազմակերպում</p> <p>2. ՀՄԸՄ-ի 100-ամյակի ձեռնարկների իրականացում ՀՀ-ում և սփյուռքի համայնքներում</p> <p>3. Տարածքներում ճարտարապետների, բժիշկների, իրավաբանների, ուսուցիչների, ընկերակցությունների ընդլայնում. ստեղծում</p>	<p>1. Սփյուռքի հայ ճարտարապետների և ընկերակցությունների տվյալների շտեմարանի համալրում</p> <p>2. « Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» կառույցի ղեկավարման նիստի գումարում</p> <p>3 Սփյուռքի ավանդական կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ), նրանց կից կառույցների և հոգևոր կառույցների հետ համատեղ հորեյանական ձեռնարկների,</p>

		<p>դրման 300-ամյակին նվիրված՝ «Սուրբ Ղազարի օրեր Հայաստանում» ձեռնարկներին աջակցություն</p>	<p>4. Սրտաբանների համաժողովի կազմակերպում</p> <p>5. ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի կազմակերպում, նախարարության առջև ծառայած ռազմավարական և մարտավարական հարցերի քննարկում</p>	<p>3. ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի կազմակերպում, նախարարության առջև ծառայած ռազմավարական և մարտավարական հարցերի քննարկում</p>	<p>4. ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի կազմակերպում, նախարարության առջև ծառայած ռազմավարական և մարտավարական հարցերի քննարկում</p>	<p>4. ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի կազմակերպում, նախարարության առջև ծառայած ռազմավարական և մարտավարական հարցերի քննարկում</p>	<p>գիտաժողովների, ցուցահանդեսների և մշակութային այլ միջոցառումների կազմակերպում</p> <p>4. Ավստրիայում, Բելգիայում և այլ երկրներում իրավաբանների հայկական ասոցիացիաների հիմնում</p> <p>5. «Հայկական Սփյուռք 2017» տարեգրքի հրատարակում</p> <p>6. ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի կազմակերպում, նախարարության առջև ծառայած ռազմավարական և մարտավարական հարցերի և խորհրդի ծրագրերի քննարկում</p>
<p>1.2. 2018-2019թվ. ընթացքում գնահատել տարբեր երկրներում հայկական համայնքների ներուժը և մշակել ըստ երկրների՝ սփյուռքի ներուժի</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Վ. Մելիքյան</p>	<p>1. Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին սփյուռքի հայտնի գործարարների, մտավորականների, գիտնականների</p>	<p>1. Հայ գիտնականների և դասախոսների ասոցիացիայի ստեղծում Սանկտ Պետերբուրգում</p>	<p>1. Տարբեր երկրներում հայկական համայնքների առողջապահության ոլորտում ներուժի գնահատում</p>	<p>1. Տարբեր երկրներում հայկական համայնքների՝ գյուղատնտեսության ոլորտում ներուժի գնահատում</p>	<p>1. Սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսների կազմակերպում Հայաստանում</p>	<p>1. Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ուղղությունների և ծրագրերի վերաբերյալ</p>

<p>Հայաստանում ներգրավման գործողությունների ծրագիր (ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետի 2-րդ ենթակետ)</p>		<p>արվեստի ներկայացուցիչների մասնակցության ապահովում</p> <p>2. Հայկական առևտրային ցանցի 3-րդ գործարար ֆորումի կազմակերպում</p> <p>3. Հեռուստա և ռադիո ծրագրերում համայնքային կյանքի լուսաբանում</p>	<p>2. Հեռուստա և ռադիո ծրագրերում լուսաբանում սփյուռքում խոշոր հայկական կառույցների գործունեությունը</p>	<p>2. «Սփյուռքահայ բժիշկները՝ Արցախին» շարժման նախաձեռնում</p> <p>3. Հեռուստառադիո ծրագրերը նվիրել հայ ներուժի հայտնաբերման, ճարտարապետների, իրավաբանների ընկերակցությունների գործունեությանը</p>	<p>2. Հեռուստառադիո ծրագրերը նվիրել լրագրողների, գրողների ընկերակցությունների գործունեության լուսաբանմանը</p>	<p>2. Առողջապահության, գյուղատնտեսության, քաղաքաշինության, կրթության և գիտության, մշակույթի, սպորտի ոլորտներում մասնագիտական խմբերի ստեղծմանն աջակցություն՝ ներգրավելով համապատասխան սփյուռքահայ հայտնի մասնագետներին</p> <p>3. Հայ լոբբիստների համաժողովի կազմակերպում</p> <p>4. Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման նոր ուղղությունների և մշակված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ներկայացում սփյուռքի համապատասխան մասնագիտական խմբերին</p>	<p>տեղեկատվության հավաքագրում և ներկայացում սփյուռքի համապատասխան մասնագիտական խմբերին</p> <p>2. «Հայ բժիշկների գործունեությունը Հայաստանում» ծրագրի իրականացմանն օժանդակություն</p> <p>3. Ըստ մասնագիտությունների 2 կլոր-սեղան քննարկումների կազմակերպում՝ Հայաստանում տարբեր ոլորտներում առկա խնդիրների լուծմանը սփյուռքի մասնագետներին ներգրավելու նպատակով</p>
<p>1.3. 2017-2018 թվ. ընթացքում մշակել ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված ներդրումային</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ս.Սրապիոնյան</p>	<p>1. Հայկական առևտրային ցանցերի հերթական համաժողովի կազմակերպական աշխատանքների լուսաբանում</p>	<p>1. Ծրագրերի դասակարգում ըստ ոլորտների, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ փորձագիտական կարծիք</p>	<p>1. ՀՀ օրենսդրության, փոքր ու միջին բիզնեսին տրված արտոնությունների, ԵԱՏՄ երկրներ և միջազգային շուկաներ արտահանման առավելությունների մասին տեղեկատ-</p>	<p>1. . ՀՀ օրենսդրության, փոքր ու միջին բիզնեսին տրված արտոնությունների, ԵԱՏՄ երկրներ և միջազգային շուկաներ արտահանման առավելությունների մասին տեղեկատ-</p>	<p>1. Հայկական առևտրային ցանցերի և սփյուռքի գործարարների հետ ներդրումային ծրագրերի քննարկում</p>	<p>1. Սփյուռքահայերի կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ընթացքի մասին տեղեկատվության հավաքագրում</p>

<p>ծրագրերը և Հայաստանում ներդրումա- յին հնարավորություն- ներ ՀՀ օրենսդրու- թյան, փոքր ու միջին բիզնեսին տրված արտոնությունները, ԵԱՏՄ երկրներ և միջազգային շուկա- ներ արտահանման առավելությունների մասին սփյուռքի գործարարներին հասանելի դարձնելու գործուն կառուցա- կարգերը (ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետի 3-րդ ենթակետ)</p>			<p>ների հավաքա- գրում և պո- տենցիալ ներ- դրողների ցան- կի կազմում</p>	<p>վրայան թարգմա- նում անգլերեն և ռուսերեն լեզուներ- ով, նյութերի տե- ղադրում ՀՀ սփյուռ- քի նախարարու- թյան պաշտոնա- կան կայքի «Ներ- դրումներ Հայաս- տանում» բաժնում</p> <p>2. Սփյուռքի գործարարներին էլեկտրոնային և այլ տարբերակներով ծրագրերի մասին իրազեկում</p>	<p>վրայան թարգմա- նում անգլերեն և ռուսերեն լեզուներ- ով, նյութերի տե- ղադրում ՀՀ սփյուռ- քի նախարարու- թյան պաշտոնա- կան կայքի «Ներդրում- ներ Հայաստանում» բաժնում</p> <p>2. Սփյուռքի գործարարներին էլեկտրոնային և այլ տարբերակներով ծրագրերի մասին իրազեկում</p>		
<p>1.4. 2017-2019 թվ. ընթացքում սփյուռքա- հայերի զբոսաշրջայ- ին այցելությունները դեպի Հայաստան խթանելու նպատա- կով հայաշատ տարածաշրջաններ- ում ներկայացնել Հայաստանի զբոսաշրջային առավելությունները, մասնավորապես, այդ նպատակով հավաքնե- ր, հանդիպումներ և այլ միջոցառումներ կազմակերպելով ԱՊՀ տարածքում, Եվրոպայում և ԱՄՆ-ում</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալներ Վ. Մելիքյան Ս.Սրապիոն- յան</p> <p>ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյան</p>	<p>1. Հայաստանի զբոսաշրջային ծրագրերի մասին տեղեկություն- ների գետեղում նախարարու- թյան պաշտո- նական կայքում</p>	<p>1. Ընտրված զբոսաշրջային ծրագրերի ներկայացում ԱՄՆ հայ համայնքներում</p> <p>2. Հայաստանի և սփյուռքի տու- րօպերատոր- ների մասնակ- ցությամբ Հայաստանի զբոսաշրջու- թյանը, առողջա- պահական և էկոտուրիզմին նվիրված հեռա- կոնֆերանսի կազմակերպում</p>	<p>1. Ընտրված զբոսաշրջային ծրա- գրերի ներկայացում ԱՊՀ հայ համայնքներում</p> <p>2. Հայաստանի տեսարժան վայրե- րի վերաբերյալ ֆիլմերի ցուցա- դրում ԱՄՆ հայ համայնքներում</p> <p>3. «Այցելություն առաջին քրիստո- նյա երկիր» շարժման նախաձեռնում</p>	<p>1. Հայաստանի տեսարժան վայրերի վերաբերյալ ֆիլմերի ցուցադրում ԱՄՆ հայ համայնքներում</p> <p>2. Հայաստանում և ԱՄՆ-ում գործող հայկական տուրօպե- րատորների միջև փորձի փոխանակ- ման կազմակերպում</p>	<p>1. Հայաստանի տեսարժան վայրերի վերաբերյալ ֆիլմերի ցուցադրում ԱՊՀ հայ համայնքներում</p> <p>2. Զբոսաշրջային և “Made in Armenia” էքսպոնների կազմակերպում ԱՄՆ հայ համայնքներում</p> <p>3. Հայաստանում և ԱՄՆ-ում հայկական գործող տուրօպերա- տորների միջև փորձի փոխանակման կազմակերպում</p>	<p>1. Զբոսաշրջային և “Made in Armenia” էքսպոնների կազմակերպում ԱՊՀ հայ համայնքներում</p> <p>2. Հայաստանում և ԱՄՆ-ում հայկա- կան գործող տուր.օպերատոր- ների միջև փորձի փոխանակման կազմակերպում</p>

<p>(Ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետի 4-րդ ենթակետ)</p>							
<p>1.5 Մինչև 2018 թվ. ավարտը մշակել սփյուռքի հայ բժիշկների, գործարարների, իրավաբանների, ճարտարագետ-ճարտարապետների և այլ մասնագիտական ընկերակցությունների գործունեության աջակցմանն ուղղված միջոցառումների ծրագիր (Ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետի 5-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Վ. Մելիքյան</p>	<p>1.Մասնագիտական ընկերակցությունների կողմից իրականացված ծրագրերի և միջոցառումների արդյունավետության գնահատում և տեղադրում «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթում</p>	<p>1.Մասնագիտական ընկերակցությունների խորհուրդների հետ գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների քննարկում և դրանց լուծմանն ուղղությամբ առաջարկությունների մշակում</p>	<p>1.Ըստ ոլորտների միջոցառումների ցանկի կազմում 2.Համատեղ ստորագրված հուշագրերի, համաձայնագրերի ընթացքի քննարկում և գնահատում</p>	<p>1.Մշակվող միջոցառումների ծրագրերի համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</p>	<p>1. Մշակվող միջոցառումների ծրագրերի համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</p>	<p>1.Միջոցառումների ծրագրերի հաստատում</p>
<p>1.6. 2018-2019 թվ. ընթացքում ապահովել Հայաստանում սփյուռքահայերի և սփյուռքահայ մասնագետների մասնակցությունն առողջապահական և էկոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակման և իրագործման գործընթացներում (Ծրագրի «Սփյուռք» բաժնի 1-ին կետի 6-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ս.Սրապիոնյան</p>	<p>1.Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին սփյուռքի հայկական տուրիստական ընկերակցությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովում 2.Ցուցադրությունների կազմակերպում 3.Ֆիլմերի ներկայացում</p>	<p>1. Սփյուռքյան համայնքների միջոցով Հայաստանի զբոսաշրջությանը նվիրված նկարների և ֆիլմերի ցուցադրությունների կազմակերպում</p>	<p>1.Սփյուռքում զբոսաշրջության ոլորտում գործող հայկական կազմակերպությունների շտեմարանի կազմում</p>	<p>1.Սփյուռքում զբոսաշրջության ոլորտում գործող հայկական կազմակերպությունների և տեղական տուրօպերատորների միջև գործընկերային կապերի հաստատում 2. «Իմ Հայրենիքը տիեզերք է» խորագրով Հայաստան ներգնա զբոսաշրջության (առողջապահական, էկո, ճանաչողական, մշակութային, էթնո, գյուղական, էքստրիմ և այլն)</p>	<p>1. Մշակված ծրագրերով դեպի Հայաստան սփյուռքահայերի այցելությունների կազմակերմանն օժանդակություն 2.Սփյուռքի ներուժի ներգրավման գործունեության ծրագրերի մշակման ավարտում</p>	<p>1. Մշակված ծրագրերով դեպի Հայաստան սփյուռքահայերի այցելությունների կազմակերմանն օժանդակություն</p>

					ծրագրերի փաթեթների մասին տեղեկատվության տարածում սփյուռքում		
2. Սփյուռքի ինքնակազմակերպում և ազգային ինքնության պահպանում (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետ)							
2.1. 2017-2022 թվ. ընթացքում շարունակել միջոցներ ձեռնարկել սփյուռքի ինքնակազմակերպման գործընթացները խթանելու հարցում, ինչպես նաև ցուցաբերել օժանդակություն թույլ կազմակերպված համայնքների համախմբմանը (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետ)	ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս. Պետրոսյան	1. Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական համայնքների երիտասարդ առաջնորդների ներգրավում «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում» 2017-2022 թվ. աշխատանքներում	1. Հայաստանի մշակութային համույթների, անհատ կատարողների համերգների, կազմակերպում համայնքներում 2. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպում համայնքների օժանդակությամբ	1. Սփյուռքի հայ համայնքի գործունեության օրինակելի ուղեցույցի կազմում 2. Հայաստանից գործուղված մասնագետների միջոցով սփյուռքի պատմության և հիմնախնդիրների վերաբերյալ դասախոսությունների և հանդիպումների կազմակերպում համայնքներում	1. Ուղեցույցի հրատարակում և տրամադրում համայնքներին 2. ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակիցների գործուղում թույլ կազմակերպված համայնքներ	1. Համայնքների կազմակերպման վերաբերյալ լավագույն փորձի ներկայացում Ռուսաստանի և Ղազախստանի հայ համայնքներում 2. Հայաստանի մշակութային համույթների, ստեղծագործական խմբերի, անհատ կատարողների համերգների, ներկայացումների և դասախոսությունների և հանդիպումների կազմակերպում համայնքներում	1. Գերմանիայի Շտուտգարդ քաղաքում անցկացվող «Հայկական օրեր» մշակութային միջոցառմանն աջակցություն (2 արվեստագետների գործուղման կազմակերպում)
2.2. 2018-2022 թվ. ընթացքում իրականացնել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ստեղծել և	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ս. Սրապիոնյան	1. «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում» 2017 թվականի ծրագրի շրջա-	1. Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության	1. Սփյուռքի դպրոցներից գրականության հայտերի հավաքագրում և պատվերի ձևավորում	1. Սփյուռքի համար էլեկտրոնային նոր ուսումնական նյութերի ստեղծում	1. «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում» 2018 թվականի ծրագրի շրջանակներում սփյուռքի հայոց լեզվի	1. Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության

<p>տարածել արևելահայերեն և արևմտահայերեն ուսուցողական հոլովակներ, համայնքներին տրամադրել ուսուցողական ձեռնարկներ, դասագրքեր և այլ նյութեր՝ սփյուռքահայերի տասարդների շրջանում հայերենի բավարար իմացության մակարդակի բարձրացման նպատակով (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 2-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյան</p>	<p>նակներում սփյուռքի հայոց լեզվի և պատմության ուսուցիչների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում</p>	<p>օժանդակ նյութերի, այդ թվում՝ էլեկտրոնային դասագրքերի, արևելահայերեն և արևմտահայերեն ուսուցողական հոլովակների տրամադրում</p> <p>2. Սփյուռքյան դպրոցներին հայրենաճանաչողական և մշակութային նյութերի տրամադրում</p>	<p>2. Աջակցություն սփյուռքի հայկական երիտասարդական խմբերի ձեռնարկումներին ՀՀ-ում</p> <p>3. Աջակցություն մեկօրյա դպրոցների հիմնման աշխատանքներին</p>	<p>2. Աջակցություն մեկօրյա դպրոցների հիմնման աշխատանքներին</p>	<p>և պատմության ուսուցիչների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստման դասընթաց Հայաստանում և սփյուռքում՝ ըստ տարածաշրջանների</p> <p>2. Աջակցություն սփյուռքի հայկական համայնքների մշակութային խմբերի ձեռնարկումներին ՀՀ-ում</p>	<p>օժանդակ նյութերի, այդ թվում՝ էլեկտրոնային դասագրքերի, արևելահայերեն և արևմտահայերեն ուսուցողական հոլովակների տրամադրում</p> <p>2. Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական համայնքներին ՀՀ ազգային հերոսների, գրողների և մշակութային գործիչների դիմանկարների փաթեթների ձեռքբերում և տրամադրում</p>
<p>2.3. 2018-2022 թվ. ընթացքում ընդլայնել սփյուռքի երիտասարդության համար նախատեսված հայրենաճանաչության ծրագրերը, դրանց մասնակիցների թիվը և աշխարհագրությունը (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 3-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյան</p>	<p>1. Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2017» ծրագրի մասնակիցների աշխարհագրության ընդլայնում</p> <p>2. «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնի անցկացում</p>		<p>1. Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2018 թվականի ծրագրի վերանայում</p> <p>2. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի 2018 թվականի ծրագրի կազմում և քննարկումների կազմակերպում</p>	<p>1. Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2018 թվականի ծրագրի փաթեթի կազմում՝ հիմքում դնելով մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի տոնակատարությունները</p>	<p>1. Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2018 թվականի ծրագրի իրականացում</p> <p>2. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի 2018 թվականի ծրագրի իրականացում՝ նվիրված Հայոց պետության 100-ամյակին</p>	<p>1. Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ համահայկական մրցանակաբաշխության իրականացում</p>

<p>2.4. 2018-2022 թվ. ընթացքում շարունակել Հայոց ցեղասպանությանը վերաբերող գրքերի, ուսուցողական ձեռնարկների հրատարակությունն ու դրանց տարածումը և կազմակերպել հանդիպում-քննարկումներ Հայաստանի և սփյուռքի համապատասխան կառույցների, մասնագետների հետ (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 4-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ս.Սրապիոնյան ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյան</p>		<p>1. «Հայոց ցեղասպանության պատմության դասավանդման ուսումնամեթոդական ձեռնարկի» հրատարակմանն օժանդակություն</p>	<p>1. Կլոր սեղան-քննարկում՝ «Հայոց ցեղասպանության պատճառով արևմտահայության կրած նյութական վնասները. լքյալ գույք և հայրենագրկում» խորագրով</p> <p>2.Սփյուռքի հայ համայնքներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայտնի հայ գիտնականների դասախոսությունների կազմակերպում</p>	<p>1.Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ տարվող աշխատանքներն ուսումնասիրող և ըստ անհրաժեշտության հակազդող կառույցի ստեղծում</p> <p>2. Հայոց ցեղասպանությանը նվիրված նյութերի ցուցադրությունների կազմակերպում հայկական համայնքներում</p>	<p>1.Հետազոտությունների կազմակերպում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվում</p> <p>2.Թուրքիայում առաջադեմ թուրք, արևելյան և համաշխարհային կողմից հեղինակած՝ հայերի ջարդն ու կոտորածները նկարագրող հոդվածների հավաքագրում</p>	<p>1. «Առաջին աշխարհամարտի արդյունքները և հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա դրանց ազդեցությունը» խորագրով միջազգային գիտաժողով</p> <p>2. Հայ դատի և պահանջատիրության վերաբերյալ ազգային ռազմավարության մշակում</p>
<p>2.5. 2018-2019 թվականների ընթացքում իրականացնել իսլամացված և ծպտյալ հայերի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրություն և առաջարկել մոտեցումներ (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 5-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյան</p>	<p>1. Լուսինե Նազարյանի գլխավորած «Նուբար» ազգագրական երգերի համույթի (10 հոգի) շրջագայող համերգների շարք Արևմտյան Հայաստանում</p>	<p>1.«Կենտրոնական Ասիայի և Ռուսաստանի կրոնափոխ համշենահայերը» (պատմական տեղեկագիր և բանահյուսություն) աշխատության հրատարակում</p> <p>2.Իսլամացված և կրոնափոխ հայության հիմնախնդիր-</p>	<p>1.«Արևմտահայությունը Թուրքիայում և տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակում. Արդի մարտահրավերներ, նրանց լուծման ուղիները» խորագրով գիտաժողով</p> <p>2. Համշենի և հարակից շրջանների քարտեզի</p>	<p>1.Դաշտային աշխատանքներ Թուրքիայի այն նահանգներում, ուր բնակվում են (հայ) բռնակներ. նրանց, կյանքի, կենցաղի, բանահյուսության, մշակույթի վերաբերյալ նյութերի հավաքման նպատակով</p> <p>2.Հետազոտությունների նպատակով այցելություն</p>	<p>1. Թուրքիայում /Արևմտյան Հայաստանում/ բնակվող իսլամացված և ծպտյալ հայերի մասին ՀՀ-ում և Սփյուռքում գիտնականների, պատմաբանների, հասարակական կազմակերպությունների և անհատների կողմից մինչ օրս իրականացված հետազոտությունների հավաք մեկ միասնական ժողո-</p>	<p>1.Միջազգային գիտաժողով՝ «Կրոնափոխությունը որպես ցեղասպանության և մարդկայնության դեմ ուղղված այլ ոճրագործությունների գործիք» խորագրով</p> <p>2.Պատրաստել կրոնափոխ արևմտահայության կյանքն արտացոլող</p>

			ներին նվիրված գիտաժողովի կազմակերպում	պատրաստում և հրատարակում	Արդվինի և Ռիզեի նահանգի համշենահայ համայնքներ: Համայնքների մտավորականների և գործիչների հետ կատարվելիք մշակութային և այլ աշխատանքների ծրագրի քննարկում	վածուում 2. Պոլսո Հայոց Պատրիարքարանի հետ համատեղ ուսումնասիրել և վերհանել իսլամացված և ծպտյալ հայերի խնդիրները	Ֆիլմաշարի առաջին ֆիլմը: Ֆիլմ 1՝ «Համշեն»
<p>2.6. 2017-2022 թվականների ընթացքում ապահովել կառավարության օժանդակության շարունակականությունը վիրահայությանը, երիտասարդական և մշակութային կենտրոնների զարգացմանը (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 6-րդ ենթակետ)</p>	<p>«Սփյուռքի նախարարի խորհրդական Ս. Պետրոսյան»</p>	<p>1. Վրաստանի հայկական դպրոցներին հայոց լեզվի և գրականության դասագրքերի առաքում</p> <p>2. Վրաստանի հայ համայնքի մշակութային և երիտասարդական կենտրոններին, հայալեզու լրատվամիջոցներին և Խոջիվանքի պանթեոնի պահպանությանը ֆինանսական միջոցների տրամադրում</p>	<p>1. Վրաստանի հայ համայնքի կրթամշակութային և երիտասարդական կենտրոններին, հայալեզու լրատվամիջոցներին, Խոջիվանքի պանթեոնի պահպանմանը ֆինանսական միջոցների տրամադրում</p> <p>2. Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախ» մշակութային, և Բաթումիի Ալ. Մանթաշյանի կրթամշակութային և երիտասարդական կենտրոններին պարային հագուստի /հայկական</p>	<p>1. Վրաստանի հայկական կազմակերպություններից, կրթամշակութային կենտրոններից և հայալեզու լրատվամիջոցներից ստացված հայտերի ուսումնասիրության հիման վրա՝ «Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին», «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» և «Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնի խնամք և պահպանում» 2018թ. ծրագրերի հաշվարկ-հիմնավորումների և տեխնիկական բնութագրերի կազմում</p>	<p>1. Ծրագրերով նախատեսված ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների հատկացում՝ նախորդ եռամսյակում կատարված աշխատանքների մասին շահառուներից ստացված հաշվետվությունների հիման վրա կազմած եզրակացության համաձայն</p> <p>2. Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ Վրաստանի հայկական դպրոցներին 2018թ. համար հայոց լեզվի և գրականության դասագրքեր տրամադրելու վերաբերյալ</p>	<p>1. Ծրագրերով նախատեսված ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների հատկացում՝ նախորդ եռամսյակում կատարված աշխատանքների մասին շահառուներից ստացված հաշվետվությունների հիման վրա կազմած եզրակացության համաձայն:</p> <p>2. Վրաստանի հայկական դպրոցներին հայոց լեզվի և գրականության դասագրքերի առաքում</p>	<p>1. Ծրագրերով նախատեսված ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների հատկացում՝ նախորդ եռամսյակում կատարված աշխատանքների մասին շահառուներից ստացված հաշվետվությունների հիման վրա կազմած եզրակացության համաձայն</p> <p>2. Իրականացված ծրագրերի արդյունքների ամփոփում, արդյունավետության գնահատում՝ կատարված աշխատանքների վերաբերյալ շահառու կազմակերպություններից ստացված հաշվետվությունների</p>

			տարագ՝ 66 կոմպլեկտ/ տրամադրում 3. Իրականացված ծրագրերի արդյունքների ամփոփում, առկա խնդիրների վերլուծություն, 2018թ. աջակցության հայտերի հավաքագրում		համաձայնության ձեռքբերում 3. Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը հետ աշխատանք՝ Վրաստանի հայկական դպրոցներին առաքվող դասագրքերի խմբաքանակը հուճմանիտար բեռ ճանաչելու ուղղությամբ		վոլյունների և հասարակական կազմակերպությունների կարծիքների համադրության հիման վրա: 2019թ. աջակցության հայտերի հավաքագրում:
2.7. Մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ընդունել սփյուռքի հայալեզու ՋԼՄ-ների հետ տեղեկատվական դաշտում համագործակցության և աջակցությանն ուղղված գործողությունների ծրագիր (ծրագրի «Սփյուռք» բաժնի 2-րդ կետի 7-րդ ենթակետ)	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ս.Սրապիոնյան	1. Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նիստի կազմակերպում՝ համահայկական խնդիրները տեղեկատվական հարթակում քննարկելու նպատակով 2. Մերձավոր և Միջին Արևելքի սփյուռքի ՋԼՄ-ների հետ հեռակոնֆերանսի կազմակերպում՝ համագործակ-	1. Հյուսիսային Ամերիկայի սփյուռքի ՋԼՄ-ների հետ հեռակոնֆերանսի կազմակերպում՝ համագործակցության հեռանկարների քննարկման նպատակով 2. Հարավային Ամերիկայի սփյուռքի ՋԼՄ-ների հետ հեռակոնֆերանսի կազմակերպում՝ համագործակ-	1. Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի անդամների ապահովում Հայաստան սփյուռք 6-րդ համաժողովին 2. Ֆինանսական աջակցության ցուցաբերում՝ սփյուռքի հայալեզու լրատվամիջոցներին հետագա գործունեությանը նպաստելու նպատակով 3. Օտար ՋԼՄ-ներում աշխատող հայազգի լրագրողների հետ հեռակոնֆերանսի	1. Եվրոպայի սփյուռքի ՋԼՄ-ների հետ հեռակոնֆերանսի կազմակերպում՝ համագործակցության և հեռանկարների քննարկման նպատակով 2 Հարցազրույցների հոդվածների նախարարության մասին պատմող նյութերի առաքում սփյուռքյան ՋԼՄ-ներին 3. Լրագրողների համահայկական համաժողովի կազմակերպում՝ համահայկական	1. Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նիստի կազմակերպում՝ համահայկական խնդիրները տեղեկատվական հարթակում քննարկելու նպատակով 2. «Սփյուռք» ամառային դպրոց» 2018թ. ծրագրի շրջանակներում լրագրողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում 3. Սփյուռքի հայալեզու ՋԼՄ-ների	1. ԱՊՀ երկրների սփյուռքի ՋԼՄ-ների հետ հեռակոնֆերանսի կազմակերպում՝ համագործակցության հեռանկարների քննարկման նպատակով 2. Սփյուռքի հայալեզու լրատվամիջոցների մրցանակաբաշխության արդյունքների ամփոփում՝ նրանց խրախուսելու նպատակով 3. Հայ լրագրողների և տեղեկատվական ոլորտի մասնա-

		ցույթան հեռանկարների քննարկման նպատակով	ցույթան հեռանկարների քննարկման նպատակով	կազմակերպում՝ համագործակցության հեռանկարների քննարկման նպատակով	տեղեկատվական հարթակի ստեղծման մեխանիզմների քննարկում և համապատասխան ծրագրի նախագծի մշակում	հետ տեղեկատվական դաշտում համագործակցության և աջակցությանն ուղղված գործողությունների ծրագրի հաստատում	գետների համահայկական ընկերակցության ստեղծում՝ համահայկական տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման նպատակով
3. Հայաստանի Հանրապետությունում սփյուռքահայերի ինտեգրմանն աջակցություն (ծրագրի «Սփյուռք» բաժնի 3-րդ կետ)							
<p>3.1. 2017-2018 թվ. ընթացքում ապահովել Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի սոցիալական և տնտեսական ինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացման աշխատանքների շարունակականությունը</p> <p>(ծրագրի «Սփյուռք» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյան</p>	<p>1.Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական նիստերի պարբերաբար կազմակերպում</p> <p>2. Միջազգային կազմակերպությունների, բարեգործական կառույցների ներկայացուցիչների հետ սիրիահայերի օգնության կազմակերպման պարբերաբար քննարկումներ</p>	<p>1. Սիրիայից և հակամարտության այլ վայրերից Հայաստան տեղափոխված անձանց համար իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկի հրատարակում</p> <p>2.Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի հավաք-հանդիպում, հիմնախնդիրների քննարկում</p>	<p>1. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի հավաք-հանդիպման կազմակերպում, հիմնախնդիրների քննարկում</p> <p>2.Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում</p> <p>3. Հայաստանում բնակվող սիրիահայ և իրաքահայ աշակերտների</p>	<p>1. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի հավաք-հանդիպման կազմակերպում, հիմնախնդիրների քննարկում</p> <p>2.Հայաստանում բնակվող սիրիահայերին և իրաքահայերին իրավական աջակցության տրամադրում</p> <p>3.Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի</p>	<p>1. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի հավաք-հանդիպման կազմակերպում, հիմնախնդիրների քննարկում</p> <p>2. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի ցուցահանդես-տոնավաճառների, մշակութային միջոցառումների և երեխաների ամառային հանգստի կազմակերպում</p> <p>3.Հայաստանում բնակվող սիրիահայերի</p>	<p>1. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի հավաք-հանդիպման կազմակերպում, հիմնախնդիրների քննարկում</p> <p>2.Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի ցուցահանդես-տոնավաճառների և Ամանորին նվիրված միջոցառումների կազմակերպում</p> <p>3.Հայաստանում բնակվող</p>

	<p>3. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի հավաք-հանդիպման կազմակերպում, հիմնախնդիրների քննարկում</p> <p>4. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի ցուցահանդես-տոնավաճառների, մշակութային միջոցառումների, ամառային հանգստի կազմակերպում</p> <p>5. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում</p> <p>6. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բնակարանային և սոցիալական խնդիրների</p>	<p>3. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի ցուցահանդես-տոնավաճառների և Ամանորին նվիրված միջոցառումների կազմակերպում</p> <p>4. Հայաստանում բնակվող սիրիահայերին և իրաքահայերին իրավական աջակցության տրամադրում</p> <p>5. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում</p> <p>6. Հայաստանում բնակվող սիրիահայ և իրաքահայ աշակերտների և ուսանողների կրթության</p>	<p>և ուսանողների կրթության կազմակերպման հարցում օժանդակում, ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրի իրականացում</p> <p>4. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի զբաղվածության խնդրի լուծմանն աջակցություն և գործարարների կայացմանն ուղղված ծրագրերի իրականացում</p>	<p>բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում</p> <p>4. Հայաստանում բնակվող սիրիահայ և իրաքահայ աշակերտների և ուսանողների կրթության կազմակերպման հարցում օժանդակում</p> <p>5. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բնակարանային և սոցիալական խնդիրների լուծման նպատակով աջակցության տրամադրում</p> <p>6. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի զբաղվածության խնդրի լուծմանն աջակցություն և գործարարների կայացմանն ուղղված ծրագրերի իրականացում</p>	<p>հայերի և իրաքահայերի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում</p> <p>4. Հայաստանում բնակվող սիրիահայ և իրաքահայ աշակերտների և ուսանողների կրթության կազմակերպման հարցում օժանդակում,</p> <p>5. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բնակարանային և սոցիալական խնդիրների լուծման նպատակով աջակցության տրամադրում</p> <p>6. Սիրիահայ ստեղծագործողների հետ հանդիպման կազմակերպում</p>	<p>սիրիահայերին և իրաքահայերին իրավական աջակցության տրամադրման արդյունքների ամփոփում</p> <p>4. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում</p> <p>5. Հայաստանում բնակվող սիրիահայ և իրաքահայ աշակերտների և ուսանողների կրթության կազմակերպման հարցում օժանդակում, սիրիահայ ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրի իրականացում</p> <p>6. Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի զբաղվածության խնդրի լուծմանն աջակցություն և գործարարների կայացմանն ուղղված</p>
--	--	---	--	---	--	---

		լուծման նպատակով աջակցության տրամադրում	կազմակերման հարցում օժանդակում, սիրիահայ ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրի իրականացում				ծրագրերի իրականացում
<p>3.2. Մինչև 2018 թվ. ավարտը լրամշակել և ընդունման ներկայացնել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ծրագրի «Սփյուռք» բաժնի 3-րդ կետի 2-րդ ենթակետ)</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյան</p>			<p>1.«Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրում</p>	<p>1.Միջազգային փորձի հիման վրա «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակում, օրենքում օգտագործված հիմնական հասկացությունների պարզաբանում, օրենքի նպատակների, խնդիրների, հայրենադարձներին տրվող օգնության և արտոնությունների վերաբերյալ դրույթների վերանայում</p>	<p>1.«Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի տեղադրում իրավական ակտերի նախագծերի հրապարակման www.e_draft միասնական կայքում՝ հանրային քննարկման համար 2.Հանրային քննարկումների արդյունքում ստացված առաջարկությունների ու դիտողությունների վերլուծություն և ամփոփում</p>	<p>1.«Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ՝ հավանություն տալու և սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու համար</p>
<p>3.3. Մինչև 2019 թվականի ավարտը մշակել արտակարգ իրավիճակներում հայտնված մեր հայրենակիցների ազգային ինտեգրման ռազմավարությունը՝ ներառելով միջազգային կազմակերպություն</p>	<p>ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյան</p>		<p>1.Աշխատանքային խմբի ձևավորում 2.Տեղեկատվության հավաքագրում 3.«Մերձավոր Արևելքում ճգնաժամի հետևանքով</p>	<p>1. «Մերձավոր Արևելքում ճգնաժամի հետևանքով տեղահանված և Հայաստան տեղափոխված անձանց ինտեգրման ազգային գործողությունների ծրագրի» նախագծի մշակում</p>	<p>1.Ռազմավարության և գործողությունների ծրագրի վերջնական տարբերակների քննարկումների կազմակերպում շահագրգիռ կողմերի հետ 2. Հանրային քննարկումների ապահովում</p>	<p>1. Ռազմավարության և գործողությունների ծրագրի ներկայացում միջազգային և դոնոր կառույցներին</p>	

<p>ների և դոնոր երկրների օժանդակությունների տրամադրման գործիքակազմ (ծրագրի «Սփյուռք» բաժնի 3-րդ կետի 3-րդ ենթակետ)</p>			<p>տեղահանված և Հայաստան տեղափոխված անձանց ինտե- գրման ազգային ռազմավարու- թյան» հիմնա- կան ուղղու- թյունների մշա- կում</p> <p>4.Ռազմավա- րության դրույթ- ների քննարկում շահագրգիռ կողմերի հետ</p>				
---	--	--	--	--	--	--	--